

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սուրն թվականի դեկտեմբերի 10—11 օրերին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 7 շրջանավարտների ավարտաճառերի բանավոր պաշտպանություն: Հանդիսություններին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Հանդիսությունները սկսվեցին դեկտեմբերի 10-ին, չորեքշաբթի օրը, ժամը 11-ին: Քննող հանձնաժողովի կազմում էին հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը և հոգևոր ճեմարանի դասախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածուներ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Խաչիկ Բադիկյանը: Նախ յուրաքանչյուր շրջանավարտ ներկայացրեց իր ավարտաճառը, որից հետո ընթերցվեց ներկայացված յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը և տրվեցին նյութին առնչվող հարցեր, որոնց շրջանավարտները հիմնականում պատասխանեցին ձեռնհասորեն և պատշաճ մակարդակով:

Իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան.

1.—Ռազմիկ սրկ. Իսախանյանը.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Բարսեղ Մաշկևորցու քարոզագիտական հայացքները»:

Աշխատանքը բաղկացած էր 60 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Բարսեղ Սաշկևորցին և Մարկոսի ավետարանի մեկնությունը:
2. Մեկնությանը կից հորդորակների բովանդակությունը և քարոզադաստիարակչական դերն ու նշանակությունը:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց «քաջալավ»:

2.—Գևորգ սրկ. Գյուլգյուլյան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության մի քանի էջեր»:

Աշխատանքը բաղկացած էր 127 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Ստեփանոս Սյունեցու «Ավագ օրհնությունները»:
2. Ստեփանոս Սյունեցու «Ղուկասու ավետարանի մեկնությունը»:
3. Ստեփանոս Սյունեցու երկու անտիպ երկերը:
4. Բնագրեր:

Աշխատանքը գնահատվեց «լավ»:

3.—Գևորգ սրկ. Մկրտչյան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Սյունյաց մետրոպոլիտությունը Օրբելյանների ժամանակ»:

Աշխատանքը բաղկացած էր 90 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Օրբելյան տոհմի Սյունիքում հաստատվելը և Սյունյաց Աթոռը՝ մինչ Ստեփանոս Օրբելյան:
2. Սյունյաց Աթոռի վերամիավորումը:
3. Վերջաբան, որտեղ ներկայացված են ընդհանուր եզրակացությունները:

Աշխատանքը գնահատվեց «գերազանց»:

4.—Մանվել սրկ. Մաթևոսյան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Մկրտության խորհուրդը»:

Ավարտաճառը բաղկացած էր 54 մեքենագիր էջից:

Առանձին ենթավերնագրերով հեղինակը անդրադարձել էր մկրտության խորհուրդի պատմությանն ու այսօրվա արարողություններին, դրանց դերին ու նշանակությանը:

Աշխատանքը գնահատվեց «բավարար»:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում շարունակվեց ավարտաճառերի պաշտպանությունը: Իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ հանդես եկան.

1.—Ղազար սրկ. Կարապետյան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Մահմեդականությունը հայկական աղբյուրների գնահատմամբ»:

Աշխատանքը բաղկացած էր 71 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Հայկական աղբյուրները մահմեդականության մասին:
2. Մահմեդական կրոնի ավանդությունների հիշատակությունը հայկական աղբյուրների մեջ:
3. Հայկական աղբյուրներում հիշատակված ընդդեմ մահմեդականների հակաճառական պատմություններ:
4. Եզրակացություններ:
5. Հավելված (բնագրեր):

Աշխատանքը գնահատվեց «գերազանց»:

2.—Ալեքսանդր սրկ. Սարգսյան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Հովհաննես վարդապետ Գառնեցու կրոնաբարոյական խրատները»:

Աշխատանքը բաղկացած էր 75 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Հայաստանի քաղաքական-տնտեսական և կրոնական վիճակը ԺԳ դարում:
2. Ս. Գեղարդա վանքը և նրա մշակութային կյանքը ԺԳ դարում:
3. Տեղեկություններ Հովհաննես Գառնեցի վարդապետի կյանքի և ստեղծագործության մասին:
4. Հովհաննես Գառնեցի վարդապետի կրոնաբարոյական խրատները:
5. Բնագրեր:

Աշխատանքը գնահատվեց «բավարար»:

3.—Տիգրան սրկ. Զուլֆայան.

Նրա ավարտաճառի թեման էր՝ «Զմմառի թիվ 204 ձեռագիրը»:

Աշխատանքը բաղկացած էր 81 մեքենագիր էջից և ընդգրկում էր.

1. Ձեռագրի հնագիտական ուսումնասիրություն:
2. Մի քանի արժեքավոր բնագրերի ուսումնասիրություն և ներկայացում:
3. Հավելված:

Աշխատանքը գնահատվեց «բավարար»:

Հավարտ վերոհիշյալ ավարտաճառերի բանավոր պաշտպանության, Վեհափառ Հայրապետը շրջանավարտներին հանձնեց դիպլոմներ: Այս առիթով շնորհավորելով շրջանավարտներին, Վեհափառ Հայրապետն ի միջի այլոց ասաց.

«Այս տարի դիպլոմների ձևը փոխվեց, հարմարեցվելով տեղական, Սովետական Միության մեջ ընդունված ձևին: Նախկինը, ինչպես գիտեք, մեծ թուղթի մը վրա էր և մեկ լեզվով էր: Նախ այդ անպատեհությունը կար, որ մեկ լեզվով էր և հանձնարարելի չէր: Հին ժամանակներում, Գևորգյան ճեմարանում, երեք լեզուներով եղած էին դիպլոմները՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն: Մենք էլ այդ ձևը որդեգրեցինք: Առաջին էջի վրա հայերենն է, հաջորդ էջի վրա ռուսերենն է, երրորդ էջի վրա՝ անգլերեն: «Եղիցի լույսի» փոխարեն լատիներեն գրված է «ֆիաթ լուքս»: Այնպես որ շնորհավորենք մեր նոր շրջանավարտներին իրենց նորաձև դիպլոմների համար:

Ես գոհունակությամբ ներկա եղա երկու նիստերին՝ երեկ և այսօր, մեր ճեմարանավարտ սաների դիպլոմային պաշտպանության առիթով: Շատ բնական է, որ որևէ կաթողիկոսի համար ուրախություն է և հոգեկան մխիթարություն տարին մի անգամ ներկա լինել այսպիսի հանդիսության և հաստատել ամեն անգամ, որ մեր հոգևոր ճեմարանը կարողանում է պատրաստել բավարար չափով, և ավելի քան բավարար չափով նույնիսկ, երիտասարդ ուսանողներ, որոնք ապագային պետք է նվիրվեն մեր Ե-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1985—1986 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

կեղեցու ծառայության: Եվ այս անգամ էլ մեր յոթ շրջանավարտները ապացույց տվեցին, թե բավարար գիտելիքներ ունեն և, մանավանդ, կարողանում են մի նյութ ուսումնասիրել և ներկայացնել այն քիչ-շատ գիտական ձևով և բավական էլ լավ հայերեն լեզվով: Դա էլ կարևոր է իմ կարծիքով: Այդ երևաց նաև բանավոր պաշտպանության ժամանակ: Ես և դուք բոլորդ աշխատությունները լրիվ չենք կարդացած, բայց մոտավոր տպավորություն մը կրեցինք անշուշտ: Բանավոր պաշտպանությունից տեսանք, թե նրանք կարողանում են ներկայացնել իրենց աշխատանքը և բավական էլ լավ հայերեն լեզվով: Փոքր-ինչ թերություններ կարող են լինել ավատ խոսելու ժամանակ: Կարևորն այն է սակայն, որ խոստողը տրամաբանական մտածումով կարողանա զարգացնել իր նյութը և ներկայացնել այն հստակությամբ: Այդ հաստատվեց նաև այս անգամ:

Ես նախ ուզում եմ շնորհավորել մեր երիտասարդ շրջանավարտներին, տալ իմ օրհնությունը նրանց և մաղթանքը, որ Աստված կիրենք հետզհետե ավելի զորացնի, ավելի ներշնչի, և նրանք հետագային շարունակեն իրենց ուսումնական աշխատանքը, որովհետև որևէ շրջանավարտ, դիպլոմ ստացող, նույնիսկ գերազանց գնահատական ստացող շրջանավարտ, եթե դրանով փակի իր ուսման ծարավը, հետագային նա համարյա անարժեք կդարձնի մինչև այդ իր սովորածը ճեմարանում: Ամեն մի շրջանավարտ ուսանող պետք է մտածի այդ մասին և իր ապագա կյանքի ընթացքին մնա ընթերցասեր, ինչքան էլ զբաղած լինի ուրիշ գործնական աշխատանքներով, չկտրվի գրքից, չկտրվի ուսումնասիրելու փափագից և հաճույքից, որովհետև դա հաճույք էլ է իսկապես: Ով որ մտնում է ընթերցասիրության հունի մեջ, առաջ է գալիս ոչ միայն պարտականության թելադրանք, այլ նաև անձնական հաճույք: Ահա այդ հաճույքն է, որ մաղթում եմ, որ դուք հետզհետե ձեռք բերեք: Մտավորական մարդու համար դա ամենաազնիվ հաճույքներից մեկն է կյանքում, մինչև խոր ծերություն նույնիսկ:

Այս առիթով ես պետք է շնորհավորանքի խոսք ասեմ նաև մեր տեսչության ու դասախոսներին, որոնք կարողացել են տարիների ընթացքում պատրաստել այսպիսի շնորհալի ուսանողներ, որոնք արժանացան հիմա գնահատանքի և դիպլոմների:

Իմ գնահատանքը նաև քննիչ հանձնաժողովի անդամներին, որոնք բարեխղճությամբ ծանոթացել են ուսանողների աշխատանքներին և ի հայտ բերին ամեն մեկի կարողությունը և շնորհքը: Մաղթենք, որ հետայսու ևս, հաջորդ տարիներին, մենք նույն հոգեկան մխիթարությունը վայելենք այս հարկի տակ ի փառս մեր Սուրբ Եկեղեցու և մանավանդ ի փառս մեր այս կրթական հաստատության, որ նույնքան սուրբ ենք նկատում մենք, Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Աստված մեզ բոլորիս լինի թող օգնական, ամեն»: